

ԼՈՐԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՐԿԵՍՏԸ

Ժամանակակից ֆրանսիական գրականության մեջ 80-90-ական թվականներին ձևավորվեց մի ուղղություն, որը զրաքննադատները պայմանականորեն անվանեցին «Ժխտողական մոդեռնիզմ»։ Սակայն, այդ տերմինն ավելի հստակ մեկնաբանվում է իբրև մոդեռնիզմի ժխտում։ Մոդեռնիզմը, իր գրական շրջանակներից դուրս գալով, հակադարձումները փոխարինում է հաստատումներով, իսկ այնուհետև երկուսն էլ փոխարինում հարցումներով։ Այսինքն՝ բանաստեղծն իրեն անընդհատ հարցեր է ուղղում սեփական «ես»-ի և «ստեղծագործական ես»-ի վերաբերյալ՝ բանաստեղծությունը դարձնելով «տիեզերական անտեղյակության գործիք»։ Այդ նոր գործընթացի տարրորոշումը տվեց Պիեռ Ռեվերդին բանաստեղծական նպատակի սահմանման ժամանակ. «Ես չեմ մտածում, ես նշում եմ»։ Նշումը, նշանը և նշանակման գործառույթը առանցքային դեր ստացան ժամանակակից ֆրանսիական բանաստեղծության մեջ։ Այդ գործընթացը առավել բազմակողմանիորեն դրսևորվեց ֆրանսիացի 36-ամյա տաղանդավոր բանաստեղծ Լորանի ստեղծագործություններում։ Երեք բիենալիների հաղթող, երիտասարդ ստեղծագործող Լորանը զրաքննադատների կողմից ընդունվեց անվերապահորեն և նույնիսկ ստացավ «կատաղի անտարբերություն»՝ «առարկաների բողոքի» նոր ուղղության կերտողի որակումը։

Լորանը բանաստեղծության մեջ սկսեց համատեղել անհամատեղելին՝ միավորելով իրար հակասող պնդումները, շաղկապելով փոխբացառող հասկացությունները, որոնք, դրվելով իրար կողքի, գրոյական վիճակի են հասցնում զգացմունքային և գաղափարական դաշտերը։

-Մենք տեսնում ենք,

Մենք կույր ենք ...

(Les Geraniums)

Եթե նա կա,

Նա չկա,

Եթե նա չկա,

Նա կա

(la Nuit)

Իրարամերժ այդ միավորումները բերում են նրան, որ որպես կրկնվող լեյտմոտիվ վերցվում է մի բառ կամ մի ֆրազ և դիտարկվում տարբեր մոտեցումների լույսի ներքո։ Օրինակ՝ «La dispute» («Վեճ»), բանաստեղծության մեջ վեճ բառը անցնում է բոլոր մեկնաբանություններով՝ սիմվոլից փոխակերպվելով զուգորդական համադրման, իսկ ասոցիացիայից՝ փիլիսոփայական ընկալման։

¹ Բոլոր բանաստեղծությունների թարգմանությունները հղվածի հեղինակին են։

րել ժխտողական մոդեռնիզմի գաղափարախոսը)՝ «եզակին անպայման պետք է միանա ընդհանուրին՝ առանց իր անհատականությունը կորցնելու: Դրան հասկանալու բոլոր միջոցներն արդարացված են: Սարտրի տեսադրություններից սկսած սեփական «ես»-ի և «ուրիշի» միջև անցնող սահմանագիծը ֆրանսիական գրականության առաջնահերթ խնդիրներից էր: Օրինակ՝ ըստ էքզիստենցիալիստների՝ «ես»-ի և «այլոց» միջև ցանկացած շփում բերում էր օտարացման և հակասությունների: Այնուհետև միտում եղավ վերացնել «ես» ի և «այլոց» միջև անցնող սահմանագիծը: Սակայն դա բերեց մտքի և զգացմունքի լարվածության թուլացմանը: Բանաստեղծական անդիմության ժխտողական մոդեռնիստները գնացին իրենց բնորոշ «ամենակլություն» ուղղվ: Նրանք ծուլեցին ստեղծագործական «ես»-ը և մարդկային «ես»-ը «այլ» հասկացության մեջ: Այդ տեսական մոտեցմանը բանաստեղծական մեկնաբանություն տվեց Պիեռ Ռեվերդին. «Եթե սահմաններն աղոտ են, ուրեմն սահման չկա»: Լորանը այդ մոտեցումները բանաստեղծականացրեց «*La delire est mon prophete*» («Ցնորքն է իմ մարգարեն») բանաստեղծության մեջ: Այս տողերում Լորանն իր սեփական «ես»-ին տալիս է այլ անուն՝ «Սառա»: Դա բանաստեղծի մարմինն է, որի հետ նա ունի մշտական պայքար և ենթագիտակցական հաշտեցում: Ի՞նչ կարիք կա պայքարելու «ուրիշի» դեմ, եթե այդ «ուրիշը» հենց ինքդ ես: Տեսական և գործնական առանձին նշանակություն ունեցող խնդիրներից է նաև եզակի-ընդհանուր, անհատական-մասսայական, ներքին-արտաքին հասկացությունների և կատեգորիաների մոր իմաստավորումը և մեկնաբանությունը: Ժամանակակից ֆրանսիական գրականության նշանավոր դեմքերից մեկը՝ Անտոնի Էմազը, այդ հարցում միանշանակ արձագանք ունի. «Եզակին պետք է ամպայման մնա ընդհանուր՝ առանց իր անհատականությունը կորցնելու. դրան հասնելու գործում բոլոր միջոցներն արդարացված են»: Էքզիստենցիալիզմի տարածմանը զուգընթաց սեփական «ես»-ի և «ուրիշի» միջև անցնող սահմանագիծը ֆրանսիական գրականության առաջնային խնդիրներից է: Սակայն էքզիստենցիալիստների արվեստում «ես» ի և «այլոց» միջև ցանկացած շփում բերում էր օտարման և հակադրության: Մոդեռնիստները վերացնում էին սահմանագիծը, սակայն դրա հետ մեկտեղ վերացնում էին նաև տարբերակիչ նշանները, այսինքն՝ հակադրությունը վերանում էր «ես»-ի և «ուրիշի» հստակ բնութագրի վերացման շնորհիվ: «Ժխտողական մոդեռնիստները» փորձեցին ծուլել այդ երկու մոտեցումները մի ընդհանուր միասնության մեջ: Նրանց ստեղծագործություններում այդ մոտեցումը հանգեցրեց նրան, որ «բանաստեղծական եսը» և «մարդկային եսը» դիտարկվեցին հենց իբրև «ուրիշ»: Այս հետաքրքրական տեսական դրույթը մեկնաբանեց Պիեռ Ռեվերդին. «Եթե սահմաններն աղոտ են, կարելի է ասել, որ սահման ուղղակի չկա»: Լորանն այդ առաջնային դրույթին տվեց բանաստեղծական մարմնավորում: «*La delire est mon prophete*» բանաստեղծության մեջ սեփական «ես»-ին

Լորանը տալիս է ուրիշ անուն՝ «Սառա»: Սառան բանաստեղծի մարմինն է, որի հետ նա ունի թե՛ հակասություններ, թե՛ սիրո պահեր: Բանաստեղծը չի ըմբռնում հստակ սահմանագիծն իր մտավոր և ֆիզիկական կերպարի միջև: Փաստորեն, մարդու «ես»-ը և դառնում է այն հայտնի «ուրիշը».

Ես սեր եմ արել Սառայի հետ,
Սառայի սերը.
Ես ամեն ինչ փորձել եմ Սառայի հետ,
Ընդվզել եմ տաք մարմնի և տամուկ հոտի դեմ,
Սառայի մերկ ձեռքերում՝
Փափուկ ու մեղկ,
Ես անտեսել եմ ուրիշի շուրթերն ու կուրծքը.
Սառան, Սառայի մարմինը,
Մի բան, որ գոյության իրավունք չունի.
Սառայի հիմքը հենց Սառան է:

Ուրիշի և անծի միջև բախումը դառնում է առավել սուր, քանի որ «ես»-ը նույնպես պայմանական է: Այդ պայմանական նշանակումը համարժեք է Սառա անվանը, որն ի դեպ չունի իմացաբանական աղերսներ: Դա մասամբ կարող է կապվել հին հրեական մշակույթի հետ, մասամբ հնչեղային և իմաստային զուգորդականությամբ հարաբերակցվում է «սոմա»՝ մարմին նշանակմանը: Սակայն կարևորն այն փաստն է, որ ժխտողական մոդեռնիստներն ի դեմս Լորանի քացառում են «intellenctulle arrier-plane»-ը, այսինքն՝ զգացմունքային քողի տակ ծավալվող մտավոր վարժանքները: Դրա համար չկա հակադրություն եսի և ուրիշի միջև, քանի որ այդ երկու մտային և ֆիզիկական պլանի կրողները ոչ թե հակադրվում են, այլ բացառում միմյանց:

Ստեղծություն՝ : Ուրիշն ատում է Սառային,
Եվ Սառան ատում է ուրիշին...
Տրոփյունն ատամնաշարի ցնորական է դառնում.
Թող որ լողամ Սառայի հետ,
Անունս Սառա է,
Եվ ես կվերացնեմ ուրիշին:

Այդ սահմանագծի վերջնական վերացումը քերեց նրան, որ Լորանը կարողացավ իրականացնել իր մշտական նպատակը՝ «պահպանել խոսքի պերճանքը և ապակայունացնել համոզմունքը»: Այստեղ նա համահունչ էր ֆրանսիական ժամանակակից պոեզիայի հիմնադադափարի հետ՝ «սկզբունքը բանաստեղծական չէ, համոզմունքը՝ նույնպես»: Բառը այն հիմնական գաղափարն է, որի հետ պոետը պարբերաբար համաձայնվում է կամ հակամարտում: Սիա վերը նշվածն էլ դարձավ Լորանի պոեզիայի հիմնաքարը: